ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Թիվ 03- 193

<<11>> նոյեմբերի 2011թ

Լոռու մարզպետ՝

պարոն Ա. Նալբանդյանին

Կից ներկայացնում ենք Թումանյան համայնքի ավագանու թիվ 28-Ն, 29-Ն, 30-Ն և 31-Ա որոշումները:

Թումանյանի քաղաքապետ՝ /Լ. Ջավարյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

/1712/ Թումանյան, կենտրոնական փողոց 1

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» նոյեմբերի 2011թ. թիվ 28 -Ն

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ ԵՎ ՎՃԱՐՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9, 10, 11, հոդվածներով և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72 հոդվածով.

Թումանյան համայնքի տարածքում 2012 թվականի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1.Հ Հ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300 քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 5000 դրամ,

2)սույն կետի «1» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա)201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 10 000 դրամ,

բ)501-ից մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30 000 դրամ,

գ)1001 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50 000 դրամ:

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3)մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1000 դրամ

4)20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2000 դրամ:

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների /բացառությամբ Հ Հ օրենսդրությամբ սահմանված՝շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1)չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 1000 դրամ,

2)բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «1» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

3)նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«07» նոյեմբերի 2011թ. Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 29-Ն

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ <<ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 19-րդ կետի, 60-րդ հոդվածի առաջին և երկրորդ մասերի համաձայն.

1.Քաղաքապետարանի իրավասության շրջանակներում քաղաքացուն տրվող /հաստատվող/ փաստաթղթերի համար քաղաքապետարանի մատուցած ծառայությունների դիմաց սահմանել փոխհատուցման վճար՝ հետևյալ չափերով՝

1)համայնքի բնակիչ համարվող անձանց աշխատավարձ և աշխատանքային հարաբերությունների հետ կապված այլ վճարներ ստանալու, նպաստներ և կենսաթոշակներ, քաղաքացիների բանկային ավանդներ ու փոստային առաքումներ /այդ թվում՝ դրամական և ծանրոցային/ ստանալու լիազորագիրը հաստատելու համար 500 դրամ:

2)Համայնքի բնակիչ համարվող անձանց տրվող բնութագրերի և երաշխավորագրերի համար՝ 500 դրամ:

3)Տեղեկանքների դիմաց գանձվող վճարի չափ սահմանել 100 դրամ:

4)Տեղեկանքների դիմաց, որոնք վճարվում են անասունների առք ու վաճառքի համար սահմանել 500 դրամ:

2.Նախադպրոցական ուսումնական հաստատության կողմից ծնողական վճարի չափ սահմանել 2500 դրամ:

Թումանյան քաղաքային համայնքի ավագանու անդամներ	Կողմ-4	Դեմ-0	Ձեռնպահ-0
Ռամազյան Անահիտ Հովհաննեսի			
Արզումանյան Աշխեն Աշխարհբեկի			
Շահվերդյան Սեյրան Սուրիկի			
Պետրոսյան Մարտուն Հովհաննեսի			

Թումանյանի քաղաքապետ՝ /Լ. Ձավարյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«07»նոյեմբերի 2011թ. Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 30-Ն

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի 8-րդ և 26-րդ կետերի համաձայն՝

1.Հաստատել Թումանյան համայնքի ղեկավարի վարձատրության չափը՝ ամսական 165000 (մեկ հարյուր վաթսունհինգ հազար) դրամ:

2.Հաստատել՝

1)համայնքի ղեկավարի աշխատակազի աշխատակիցների թվաքնակար՝ 17 աշխատակից:

2)<<Թումնայան քաղաքի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակաը՝ 8 աշխատակից:

3.Հաստատել համայնքի ղեկավարի աշխատակազմի <<Թումնայան քաղաքի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևրային կազմակերպության աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի:

Թումանյան քաղաքային համայնքի ավագանու անդամներ	Կողմ-4	Դեմ-0	Ձեռնպահ-0
Ռամազյան Անահիտ Հովհաննեսի			
Արզումանյան Աշխեն Աշխարհբեկի			
Շահվերդյան Սեյրան Սուրիկի			
Պետրոսյան Մարտուն Հովհաննեսի			

Թումանյանի քաղաքապետ՝ /Լ. Ջավարյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«07» նոյեմբերի 2011թ. Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 31 -Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆԱՏԱՆԻՔՆԵՐԻՆ
ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Թումանյան քաղաքային համայնքի ավագանու. 2011թ. փետրվարի 4-ի <Թումանյան համայնքի 2011թ. բյուջեն հաստատելու մասին> թիվ 1-Ն որոշումը և Թումանյան քաղաքի բնակիչներ Վանիչկա Դանիելյանի, Ջեմմա Սոխիկյանի և Արման Մոսինյանի դիմումները.

1.Թումանյանի քաղաքապետարանի սոցիալական օգնության խմբի այլ նպաստներ բյուջեից /հոդված 4729/ Թումանյան քաղաքի ստորև բերված անապահով քաղաքացիներին տրամադրել դրամական օգնություն.

1) Վանիչկա Դանիելյան - 20 000 դրամ
2) Ջեմմա Սոխիկյան - 20 000 դրամ
3) Արման Մոսինյան - 20 000 դրամ

2. Թումանյանի քաղաքապետարանի գանձապահ Անգին Ծատինյանին լիազորել Ալավերդու ՏԳԲ – ից ստանալու հատկացված դրամական օգնությունը:

Թումանյանի ավագանու անդամներ	Կողմ-4	Դեմ-0	Ձեռնպահ-0
Ռամազյան Անահիտ Հովհաննեսի			
Արզումանյան Աշխեն Աշխարհբեկի			
Շահվերդյան Սեյրան Սուրիկի			
Պետրոսյան Մարտուն Հովհաննեսի			

Թումանյանի քաղաքապետ՝ /Լ. Ջավարյան/